ՏԵՂԵԿԱՆՔ

Իրավական ակտերի նախագծերի հանրային քննարկման վերաբերյալ

Իրավական ակտի նախագծի անվանում

«Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման հավանական զոհերին, զոհերին և հատուկ կատեգորիայի զոհերին կացարանի տրամադրման, բնաիրային, հոգեբանական, խորհրդատվական, իրավաբանական օգնության և խնամքի տրամադրման, այդ թվում՝ համապատասխան հաստատություններում, որակի նվազագույն չափորոշիչները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ

Իրավական ակտի նախագիծ մշակող մարմնի անվանում

Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն

Իրավական ակտի տեսակ

Որոշում

Ոլորտ

Սոցիալական ապահովություն

Հանրային քննարկման ժամկետ

22/07/2022 - 08/08/2022

Ստացված առաջարկների արդյունքներ

Ստացվել է 4 առաջարկ (կայքում առկա առաջարկներից)

Ամփոփվել է 4 առաջարկ

Քվեարկության արդյունքներ

2 կողմ

15 դեմ

Տեղեկանքը գեներացվել է www.e-draft.am կայքի կողմից

08/08/2022

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ
«ՄԱՐԴԿԱՆՑ ԹՐԱՖԻՔԻՆԳԻ ԵՒ ՇԱՀԱԳՈՐԾՄԱՆ ՀԱՎԱՆԱԿԱՆ ԶՈՀԵՐԻՆ, ԶՈՀԵՐԻՆ ԵՒ ՀԱՏՈՒԿ ԿԱՏԵԳՈՐԻԱՅԻ ԶՈՀԵՐԻՆ ԿԱՑԱՐԱՆԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԲՆԱՒՐԱՅԻՆ, ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ, ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ, ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՒ ԽՆԱՄՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ, ԱՅԴ ԹՎՈՒՄ՝ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ, ՈՐԱԿԻ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

h	Առարկության, առաջարկության հեղինակը, ստացման ամսաթիվը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակացություն	Կատարված փոփոխությունը
	1	2	3	4
1	Viktoria Avakova 07.08.2022 11:53:30	1.Հեղինակների հիմնավորմամբ տվյալ փաստաթղթի կազմումը բխում է Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 909–Լ որոշումից, ուտեղ կետ 1.1.8.-ում նշված է Փոփոխություններ կատարել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում՝ մատուցվող անհրաժեշտ ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչների .....մշակման և	Առաջարկը չի ընդունվել 3-րդ կետում նշված պատճառաբանությամբ, քանի որ 4-րդ առաջարկը տառացի կրկնում է 3-րդ առաջարկը:	

		ներդրման գործընթացներն ապահովելու համար: Որպես ակնկալվող արդյունք նշված է, որ <<Կբարձրանա մատուցվող ծառայությունների որակը և արդյունավետությունը, կբարելավվի ինտեգրման գործընթացը>>: Այդ գործընթացը ներառում է այն բոլոր գործողությունները, որոնք նպաստում են թրաֆիքինգի զոհերի հոգեբանական և առողջապահական ռեաբիլիտացիային, իրավունքների վերականգմանը, սոցիալական վերաինտեգրմանը, ինչպես նաև այն բոլոր կառույցների գործողությունները, որոնք իրենց ներդրումը ունեն այդ գործընթացում: Չափորոշիչները պետքէ գնահատեն վերաինտեգրման գործընթացի արդյունավետությունը և հիմնված լինի զոհի կարիքների գնահատման վրա: Ներկայացված փաստաթուղթը իրենից ներկայացնում է չափանիշներ/ստանդարտներ կամ տեխնիկական պահանջներ, որոնք պետք է ապահովվեն այն կազմակերպության/հաստատության կողմից, որը իրականացնում է թրաֆիքինգի զոհերի աջակցության գործընթացը: Իհարկ է դրանք շատ կաևոր են, բայց այդ		

		չափանիշների ապահովումը դեռ չի նշանակում, որ թրաֆիքինգի զոհերի աջակցությունը և վերաինտեգրումը արդյունավետ է և հաջողված: Առաջարկում են վերանվանել փաստաթուղթը՝ և <<որակի նվազագույն չափորոշիչներ>> տերմինի փոխարեն օգտագործել <<նվազագույն պահանջներ>> տերմինը:		
2	Viktoria Avakova 07.08.2022 11:55:38	Հեղինակների հիմնավորմամբ տվյալ փաստաթղթի կազմումը բխում է Հայաստանի Հանրապետությունում 2020-2022 թվականների ընթացքում մարդկանց թրաֆիքինգի և շահագործման դեմ պայքարի կազմակերպման ազգային ծրագիրը և ծրագրի իրականացման ժամանակացույցը սահմանող Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 909–Լ որոշումից, ոտեղ կետ 1.1.8.-ում նշված է Փոփոխություններ կատարել Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում՝ մատուցվող անհրաժեշտ ծառայությունների որակի նվազագույն չափորոշիչների .....մշակման և ներդրման գործընթացներն ապահովելու համար: Որպես ակնկալվող արդյունք նշված է,	Առաջարկը չի ընդունվել: Նախագծով սահմանվել են նվազագույն չափորոշիչներ, որոնց պարտադիր կիրառումը չի բացառում, որ հասարակական կազմակերպությունը պետք է դրանց կիրառումը համակցի մասնագիտական, ներառյալ՝ հոգեբանական ու առողջապահական այնպիսի հմտությունների հետ, որոնք չվնասեն թրաֆիքինգի զոհին կամ հավանական զոհին, չառաջացնեն նրա երկրորդային զոհականացում և ապահովեն այլ կանոններ կամ սկզբունքներ, որոնք պարտադիր են թրաֆիքինգի զոհերի կամ հատուկ կատեգորիայի զոհերի հետ աշխատանքը կազմակերպելիս: Այսինքն, ներկայացված չափորոշիչները՝ թրաֆիքինգի զոհերին կամ հատուկ կատեգորիայի զոհերին մատուցվող ծառայություններից մի քանիսին վերաբերող	

		որ <<Կբարձրանա մատուցվող ծառայությունների որակը և արդյունավետությունը, կբարելավվի ինտեգրման գործընթացը>>: Այդ գործընթացը ներառում է այն բոլոր գործողությունները, որոնք նպաստում են թրաֆիքինգի զոհերի հոգեբանական և առողջապահական ռեաբիլիտացիային, իրավունքների վերականգմանը, սոցիալական վերաինտեգրմանը, ինչպես նաև այն բոլոր կառույցների գործողությունները, որոնք իրենց ներդրումը ունեն այդ գործընթացում: Չափորոշիչները պետքէ գնահատեն վերաինտեգրման գործընթացի արդյունավետությունը և հիմնված լինի զոհի կարիքների գնահատման վրա: Ներկայացված փաստաթուղթը իրենից ներկայացնում է չափանիշներ/ստանդարտներ կամ տեխնիկական պահանջներ, որոնք պետք է ապահովվեն այն կազմակերպության/հաստատության կողմից, որը իրականացնում է թրաֆիքինգի զոհերի աջակցության գործընթացը: Իհարկ է դրանք շատ կաևոր են, բայց այդ չափանիշների ապահովումը դեռ չի նշանակում, որ թրաֆիքինգի զոհերի	նվազագույն պայմաններն ու պահանջներն են, այլ ոչ թե դրանց տրամադրման ձևն ու մեթոդիկան կամ տակտիկան: Ինչ վերաբերում է առաջարկին, որ պետք է վերանվանել փաստատուղթը՝ և «որակի նվազագույն չափորոշիչներ» տերմինի փոխարեն օգտագործել «նվազագույն պահանջներ» տերմինը, ապա այդ առաջարկը նույնպես չի ընդունվել, քանի որ նախագիծը գրվել է «Մարդկանց թրաֆիքինգի և շահագործման ենթարկված անձանց նույնացման և աջակցության մասին» օրենքում կատարված լրացման պահանջներին համապատասխան, մասնավորապես օրենքի 22-րդ հոդվածի 2.2-րդ մասով սահմանված լիազորող նորմին համահունչ: Բացի այդ, www.e-draft.am կայքէջում տեղադրված հիմնավորման մեջ որևէ հիշատակում կամ հղում Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունիսի 4-ի N 909–Լ որոշման 1.1.8. կետին առկա չէ:	

		աջակցությունը և վերաինտեգրումը արդյունավետ է և հաջողված: Առաջարկում են վերանվանել փաստաթուղթը՝ և <<որակի նվազագույն չափորոշիչներ>> տերմինի փոխարեն օգտագործել <<նվազագույն պահանջներ>> տերմինը:		
3	Viktoria Avakova 07.08.2022 11:55:38	Հաշվի առնելով, որ տվյալ փաստաթղթի կազմումը հիմնավորող օրենքի փոփոխությունը և այս նախագիծը չեն քննարկվել Հակաթարֆիքինգային միջգերատեսչական հանձնաժողովում, ոչ էլ խորհրդակցվել է Հայաստանում երկարատև և հաջողված փորձ ունեն թրաֆիքինգի աջակցության ոլորտի կազմակերպությունների և մասնագետների հետ և նպատակ ունենալով ապահովել թրաֆիքինգից տուժած մարդկանց արդյունավետ վերաինտեգրման գործընթացը, առաջարկում եմ հետաձգել փասթաթղթի ընդունումը, կազմակերպելով մասնագիտական մանրակրկիտ քննարկում: Հարկ է նշել, որ թրաֆիքինգի զոհերը վերապրում են շատ խորը հոգեբանական տրավմաներ, առողջության խաթարում, ինչպես նաև ենթարկվում են շրջապատի և իրենց հարազատների կողմից խտրական վերաբերմունքի,	Առաջարկը չի ընդունվել: Օրենքով սահմանված կարգով Նախագիծը ներկայացվել է կարծիքի թե՛ շահագրգիռ պետական մարմիններին ու կազմակերպություններին, թե ներկայացվել է հանրային քննարկման, որոնց արդյունքում ներկայացված ողջամիտ ու հիմնավոր առաջարկությունները հիմք են հանդիսացել Նախագծի լրամշակման համար: Եթե առկա էին առարկայական առաջարկներ, դրանք պետք է ներկայացվեին այն 15 օրվա ընթացքում (22.07.2022-08.08.2022թթ.), որի ընթացքում քննարկվող Նախագիծը տեղադրված էր www.e-draft.am կայքէջում: 2-րդ առաջարկում զետեղված մյուս առաջարկները կրնում են Դեմոկրատիան այսօր ՀԿ (info@democracytoday.am) կողմից ներկայացված՝ 1-ին առաջարկում նշված առաջարկները, որոնց առնչության պատասխանն արդեն ներկայացվել է 1-ին կետում:	

		կացարանում անհրաժեշտ է ձևավորել վստահության մթնոլորտ և կոնֆորտ միջավայր, ինչպես նաև ունենալ անհատական մոտեցում՝ հիմնվելով տվյալ անձի կարիքների գնահատման և անձական յուրահատկությունների վրա, իսկ բոլոր գործողությունները պիտի համաձայնեցվեն զոհի հետ: Փաստաթղթում առաջարկվող որոշ պայմանների ապահովումը բացասական ազդեցություն կունենա թրաֆիքինգի զոհերի վերականգման վրա: Օրինակ՝ կետ 10-ում նշված զոհերին կացարան ընդունելիս բժշկական զննումը և դրա հետ կապված հետազոտությունները կարող են սահմանափակել կացարանի հասանելիությունը քանի որ թրաֆիքինգի զոհերը գտնվելով ծանր հոգեբանական վիճակում և հիմնականուն հրաժարվում են կացարան ընդունվելու պահին ենթարկվել բուժզննմամ: Բնաիրային օգնությունը՝ սնունդը, հագուստը, հիգիենայի պարագաները ևս ունեն վերանայման կարիք և պետք է հաշվի առնեն անձի ցանկությունները, ազգային յուրահատկությունները և այլն: Միուս սահմանափակումը վերաբերվում է կետ 11-ին, որտեղ նշված է որ <<Անձը չի կարող ընդունվել կացարան,		

		ներառյալ՝ կարանտինային բաժանմունքում գտնվելուց հետո, եթե ունի Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշմամբ հաստատված և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններից որևէ մեկը>>: Հաշվի առնելով, որ թրաֆիքինգի զոհերի մեծամասնությունը ենթարկվում է սեռական շահագործման, ապրում է վատ պայմաններում, վատ է սնվում, և ունի ցածր դիմադրողականություն, նրանց մոտ լինում են այնպիսի հիվանդություններ, ինչպես ՄԻԱՎ վարակը, հեպատիտներ B/C, և այլ: Այդ հիվանդությունները հիմնականում հայտնաբերվում են անձին կացարան ընդունելուց որոշ ժամանակ անց, երբ որ նա համազայնվում է անցնել համապատասխան հետազոտություններ, որոնք ըստ օրենքի և մարդու իրավունքների նորմերի համաձայն կամավոր են մեր երկրում:		
4	Դեմոկրատիան այսօր ՀԿ 07.08.2022 14:39:20	Կացարանի տրամադրման որակի նվազագույն չափորոշիչների 10-րդ կետ՝ կացարանում բժշկական զննում անցկացնելու անհրաժեշտություն չկա, ինչ	Առաջարկը չի ընդունվել: Դուք նշել եք, որ 10-րդ կետի համաձայն (www.e-draft.am կայքէջում տեղադրված Նախագծի 14-րդ կետն է)՝ կացարանում բժշկական	

		վերաբերվում է կղանքի միանվագ մանրէաբանական և մակաբուծաբանական հետազոտությանը՝ նման հետազոտությունը բժշկա-սանիտարական անհրաժետություն կարող է հանդիսանալ միայն փոքր երեխաների խնամքի հաստատություններում: 11-րդ կետը առաջարկում ենք չեղարկել, հաշվի առնելով, որ թրաֆիքինգի զոհերի շրջանում հավանական է լինեն նաև ՄԻԱՎ վարակակիրներ և ընդունված միջազգային նորմերի համաձայն նրանց՝ կացարանում գտնվելը չի սպառնում այլոց առողջությանը: Այս կետի ընդունումը կնշանակի իրավունքի խստագույն խախտում և կդիտարկվի որպես խտրականություն: Ինչ վերաբերվում է բնաիրային օգնությանն և սննդի տրամադրմանը՝ հաշվի առնելով, որ կացարանում կարող է լինել մեկ շահառու, ապա հստակ սահմանված նորմերը հնարավոր չի լինի կատարել, իրավիճակով պայմանավորված հագուստի կամ կոշկեղենի անհրաժեշտությունը կարող է ավելի շատ լինել քան սահմանված է այստեղ: Եթե կացարանում զոհերի թիվը քիչ է, ապա այս դեպքում սննդամթերքի տրամադրման	զննում անցկացնելու անհրաժեշտություն չկա, ինչ վերաբերվում է կղանքի միանվագ մանրէաբանական և մակաբուծաբանական հետազոտությանը՝ նման հետազոտությունը բժշկասանիտարական անհրաժեշտություն կարող է հանդիսանալ միայն փոքր երեխաների խնամքի հաստատություններում: Այս առաջարկը չի ընդունվում, քանի որ Նախագծի 14-րդ կետը խմբագրվել է Նախագծի արտաքին շրջանառության ժամանակ ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրամադրված կարծիքին համապատասխան՝ կիրառվել են այդ կարծիքում նշված եզրույթները, իսկ թվարկված բժշկական հետազոտությունները նպատակ են հետապնդում ապահովել անվտանգ սանիտարահիգիենիկ միջավայրի ձևավորումը կացարանում: Հետևաբար, ոլորտային նախարարության կողմից քաղաքականության իրականացումը կացարանում պետք է ապահովվի ըստ պատշաճի: Չի ընդունվել նաև 11-րդ կետի (www.e-draft.am կայքէջում տեղադրված Նախագծի 14-րդ կետն է) վերաբերյալ առաջարկը, քանի որ բարձրաձայնված	

		համար առաջարկում ենք սահմանել յուրաքանչյուր օրվա համար գումարի չափ: Դեղորայքի տրամադրումը ներառված չէ ցանկում, անհրաժեշտ է հաշվի առնել, որ պետպատվերի շրջանակներում տրամադրվող բժշկական աջակցությունը չի ներառում ամբուլատոր պայմաններում բուժման համար դեղորայքի հատկացումը: Պետք է հատկացնել դրամական միջոցներ դեղորայքի ձեռքբերման համար: Ներառված չեն նաև առաջին բժշկական օգնության պարագաները: Այս որոշման նախագիծը ունի լրացուցիչ քննարկման կարիք:	առաջարկը ոչ թե այս Նախագծի կարգավորման առարկան է, այլ վերաբերում է ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշմամբ հաստատված և շրջապատի համար վտանգ ներկայացնող հիվանդությունների ցանկում ընդգրկված հիվանդություններին: Քննարկվող նախագիծը լոկ հղում է կատարում ՀՀ կառավարության արդեն իսկ գործող որոշմանը: Հետևաբար, որևէ հիվանդության առնչությամբ փոփոխություն իրականացնելու համար փոփոխություն պետք է կատարվի ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 27-ի N 1286 որոշման մեջ, այլ ոչ թե քննարկվող Նախագծում: Ինչ վերաբերվում է բնաիրային օգնությանն ու սննդի տրամադրմանը վերաբերող առաջարկին, ապա այն նույնպես չի ընդունվել, քանի որ ցանկացած հաստատությունում անձանց գտնվելու դեպքում պետք է լինեն, և այլ հաստատությունների առնչությամբ հաստատված են թե՛ սննդի, թե՛ բնաիրային օգնության, թե՛ այլ պարագաների չափեր կամ քանակ, որոնք անխտիր տրամադրվում են այդ անձանց: Ավելին, դա նվազագույն չափորոշիչներ են, ինչը	

			նշանակում է, որ հասարակական կազմակերպությունը կաշկանդված չէ ավելին տրամադրել, քան սահմանված է սույն Նախագծում: Սննդի և բնաիրային օգնության փոխարեն գումար՝ դրամ, տրամադրելը նախատեսված չէ ՀՀ գործող օրենսդրությամբ, հետևաբար չի կարող կիրառվել: Դեղորայքի տրամադրումը ներառված չէ Նախագծում, քանի որ սույն նախագծի կարգավորման առարկայից դուրս է, և իրականացվում է առողջապահական ոլորտի օրենսդրությանը համապատասխան:	